«Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի հունվարի 14-ի N 02-Ն հրամանում փոփոխություններ կատարելու մասին» Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանի նախագիծ

ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 14-Ի N 02-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների 1-ին մասերով՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ ԵՄ

1. Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի հունվարի 14-ի «Նախադպրոցական ուսումնական հաստատության տնօրենի ղեկավարման իրավունքի (հավաստագրման) համար վերապատրաստման, քննությունների և հավաստագրման կազմակերպման, հավաստագրի դադարեցման, ինչպես նաև հավաստագրման լիազոր մարմնի կազմավորման և գործունեության կարգը հաստատելու մասին» 02-Ն հրամանի (այսուհետ՝ Հրաման) վերնագրից հանել «վերապատրաստման,» բառը.
2. Հրամանի հավելվածի՝

- Վերնագրից հանել «վերապատրաստման,» բառը.
- 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Սույն կարգով կարգավորվում են նախադպրոցական ուսումնական հաստատության (այսուհետ՝ Ուսումնական հաստատություն) ղեկավարման իրավունքի հավաստագրման գործընթացը իրականացնող աշխատանքային խմբի (այսուհետ՝ Աշխատանքային խումբ)՝ կազմավորման և գործունեության, քննության (այսուհետ՝ թեստավորման) անցկացման և հավաստագրման, ինչպես նաև ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի (հավաստագրի) դադարեցման գործընթացների հետ կապված հարաբերությունները։».

- 2-րդ կետում «վերապատրաստվել» բառը փոխարինել «դիմել» բառով.
- 2-րդ գլուխն ուժը կորցրած ճանաչել.
- 34-րդ կետն ուժը կորցրած ճանաչել.
- 38-րդ կետից հանել «վերապատրաստում անցած և» բառերը.

- 43-րդ կետից հանել «վերապատրաստող կազմակերպության կամ» բառերը.
- 45-րդ կետի 1-ին ենթակետի գործողությունը դադարեցնել.
- 47-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«47. Սույն կարգի 46-րդ կետում սահմանված թեստավորման ժամանակացույցը կազմվում է՝ հիմք ընդունելով թեստավորման համար Նախարարին դիմած հավակնորդների թիվը։».

- 52-րդ կետում «Վերապատրաստման» բառը փոխարինել «Թեստավորման» բառով.
- 93-րդ կետում «Վերապատրաստված, թեստավորման» բառերը փոխարինել «Թեստավորման» բառով.
- 109-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«109. Աշխատանքային խմբի գործունեության նպատակն է նախադպրոցական ուսումնական հաստատության տնօրենի ղեկավարման իրավունքի (հավաստագրման) ստացման համար սահմանված կարգով դիմած անձանց թեստավորման կազմակերպումը, անցկացումը և հավաստագրի տրամադրումը։».

- 119-րդ կետում «վերապատրաստված» բառը փոխարինել «դիմած» բառով.
- «ՁԼ-1»-ն ուժը կորցրած ճանաչել.